

Ա. Հ.

## ՀԱՅՈՑ ԶԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 50-ԱՄՅԱԿԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ\*

### Մուտք

**1960-ականները նշանավորվեցին Խորհրդային Հայաստանի և ողջ աշխարհի հայության վերագարթոնքով, որի գագաթնակետը Հայոց ցեղասպանության 50-ամյա տարելիցի համագգային ոգեկոչումն էր 1965 թվականին:**

Ի թիվս բազում ենթակայական և առարկայական խոչընդոտների՝ Խորհրդային Հայաստանում Հայոց ցեղասպանության 50-ամյակի ոգեկոչումը կապված էր տիրող վարչաիրամայական համակարգի դիմադրության հաղթահարման խնդրի հետ<sup>1</sup>: Ուստի ՀԽՍՀ կուսակցական-պետական ղեկավարությունից, հիրավի, քաղաքական խիզախություն էր պահանջվում Մոսկվայից թույլտվություն ստանալու, իր իսկ ներսում գոյություն ունեցող ապագգային ընդդիմությունը չեզոքացնելու և Եղեռնի 50-ամյակին բազմակողմանիորեն նախապատրաստվելու համար:

Ի վերջո, առանձին բացառություններից և բնականաբար՝ հայրենադարձներից ու սասունցի-մշեցիների սերունդներից զատ, խորհրդահայությունը մեծ մասամբ տեղյակ չէր մոտեցող տարելիցի մասին, քանզի նրան տարիներ շարունակ միանգամայն այլ բաներ էին սերտել տվել, այլ դաստիարակությամբ առաջնորդել: Եվ անգամ նման պայմաններում շատ շուտով պարզվեց, որ յուրաքանչյուր խորհրդահայ համակվել է Եղեռնի 50-ամյակով և ամենայն պատվախնդրությամբ դառնում է խորհրդային մտածելակերպին անհարիր պայքարի մասնակիցը:

Նշանավոր արձակագիր Վարդգես Պետրոսյանի դիպուկ բնորոշմամբ՝

\*Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի մոտեցման հետ կապված՝ արդիական հնչեղություն է ձեռք բերում Խորհրդային Հայաստանում նրա 50-ամյակի նշման ճշգրիտ, առարկայական պատմությանը նվիրված սույն հրապարակումը: Հոդվածն ընդունվել է տպագրության 22.04.2013:

1 ՀԽՍՀ պատմության պաշտոնական ժամանակագրություններում, որտեղ իրադարձությունները ներկայացված են ամենայն մանրամասնությամբ և ամենօրյա կտրվածքով, Եղեռնի 50-ամյակը և 1965 թ. ապրիլի 24-ի ցույցերն անտեսված ու մոռացության են մատնված: Անգամ չեն հիշատակվում կուսակցական-պետական վերնախավի կազմակերպած պաշտոնական միջոցառումները: Տե՛ս Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության համառոտ ժամանակագրություն, 1920-1980, Եր., 1981: Տե՛ս նաև **Հարությունյան Շ.**, Սովետական Հայաստան. Տարեգրություն, 1920-1980, Եր., 1982:

Ե (ՓԵ) քարի, թիվ 2 (42) ապրիլ-հունիս, 2013  
ՎԻՄ համահայկական հանդես

«Քառասունհինգ տարի, 1920-ից մինչև 1965 թվականը, ամեն ապրիլի 24-ը մենք նույնիսկ գրկված էինք ... տխրելու իրավունքից: Այդ ամենը, հասկանալի է, վիրավորում էր մեր ազգային ինքնասիրությունը, տարեց-տարի գերլարման հասցնելով մեր ազգային համբերության և արժանապատվության պրկված զսպանակը: Եվ 1965-ին, Մեծ Ցեղասպանության 50-ամյա տարելիցի օրը, այդ զսպանակը պայթեց»<sup>2</sup>:

## 1. Յակով Զարոբյանի ֆենոմենը



Դժվարություններն ահռելի էին, իսկ դրանց հաղթահարման հնարավորությունները՝ նվազագույն: Բավական է նշել, որ երբ Եղեռնի 50-ամյակը ոգեկոչելու թույլտվություն ստանալու համար ՀԿԿ կենտկոմը դիմեց Մոսկվա, ԽՄԿԿ կենտկոմի Քաղբյուրոն հարցի քննարկման համար կազմեց հատուկ հանձնաժողով՝ Մ. Սուսլով, Ն. Պոդգորնի, Ա. Գրոմիկո կազմով, որը թեպետ բավականին դժկամորեն, բայց և այնպես համաձայնեց թույլատրել նշելու Եղեռնի 50-ամյակը: Արժե հիշատակել, որ մասնավորապես ԽՄԿԿ պաշտոնական գաղափարախոս Մ. Սուսլովը հայտնի էր իր ընդգծված հայատյաց դիրքորոշմամբ:

Սակայն մեկ բան հստակ է. ՀԽՍՀ ղեկավարությունը, հանձին ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Յա. Զարոբյանի, ի գորու եղավ հաղթահարելու սուսլովյան արգելապատնեշը: Հարկ է նշել, որ Յա. Զարոբյանը սեփական անձի և գերդաստանի ճակատագրով (1914 թ. ծննդավայր Արդվինից գաղթած և ոտքով Ռոստով հասած, ապա մինչև 1949 թ. Հայաստանից դուրս ապրած) զգացել էր Մեծ եղեռնի արհավիրքները: Ուստի Խորհրդային Հայաստանի համար պատասխանատվություն ստանձնելով, նա կարողացավ կոմունիստական հասարակարգի պայմաններում առաջ քաշել և իրականություն դարձնել ակամայից՝ որոշակի հակախորհրդային երանգավորում ձեռք բերող համազգային միջոցառումները, որոնք արմատապես հեղաշրջեցին խորհրդահայության մտածելակերպը, ձևավորեցին միանգամայն նոր հոգեկերտվածք:

1960 թ. դեկտեմբերի 28-ից դառնալով ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար՝ Յա. Զարոբյանն անմիջապես ձեռնամուխ եղավ որոշակի ազգային ծրագրերի իրականացմանը: Արդեն 1961 թ. սկզբին նա ՀԿԿ կենտկոմի ագիտքարոզչական բաժնում ստեղծեց արտասահմանյան կապերի ենթաբաժին և պահանջում ու հսկում էր, որպեսզի դրա ղեկավար Կ. Դալլաքյանը երկու շաբաթը մեկ գեկուցի Սփյուռքի իրադրության մասին: Յա. Զարոբյանը հենց սկզբից զգուշացրել էր, որ այդ ենթաբաժինը «ար-

2 Պետրոսյան Վ., Մեր ժողովուրդը իմն է՝ ինչպես ... իմ վիշտը, Եր., 2003, էջ 133:

տասահմանյան կոմկուսների պատվիրակություններ ընդունելուց, խաղաղության շարժման գործը Հայաստանում համակարգելուց և նման կարգի ուրիշ հարցերից զատ ու դրանցից առավել, պետք է զբաղվի Սփյուռքի հարցերով, որ ինքը հաճախ, անմիջապես պիտի զբաղվի ենթաբաժնով»<sup>3</sup>:

Ուշագրավ է, որ Յա. Զարոբյանն արդեն 1961 թ. ապրիլի 24-ի նախօրյակին հետաքրքրվել էր Եղեռնի 50-ամյակի առիթով Սփյուռքում իրականացվելիք ծրագրերով: Այս տեսանկյունից խոսում է 1962 թ. սկզբին Յա. Զարոբյանի և լիբանանահայ հասարակական գործիչ Անդրանիկ Ծառուկյանի հետևյալ երկխոսությունը. Յա. Զարոբյանը, հարցնելով Սփյուռքի ծրագրերի մասին, ասել է. «Իմ երազանքն էլ դա է, հասնել Սփյուռքի համախմբմանը Խորհրդային Հայաստանի շուրջ: Մեկը մյուսին խիստ անհրաժեշտ են: Հատկապես հայապահպանության համար: Հայրենիքը մեկն է, հայությունն էլ թող լինի մեկ, մի ամուր միասնության մեջ»<sup>4</sup>:

1961 թ. հունվարի 28-ին Յա. Զարոբյանը նամակ ուղարկեց ԽՄԿԿ կենտկոմ խնդրելով թույլատրել հայրենադարձության իրականացումը 1961-1965 թվականներին<sup>5</sup>: Սա, փաստորեն, տասնամյակներով ընդհատված համագգային նշանակության գործընթացի շարունակությունն էր: Այս առումով հատկանշական է այն փաստը, որ 1961 թ. հունիսի 3-ին Գրիգոր Զոհրապի 100-ամյակը նշելու խնդրով դիմելով ԽՄԿԿ կենտկոմին՝ Յա. Զարոբյանը մասնավորապես շեշտում էր. «1915 թվականին, հայկական կոտորածի օրերին, հայ մտավորականության հիսաքանչ ներկայացուցիչների հետ Գր. Զոհրապը բանտարկվել և թուրքական յանիչարների կողմից գազանաբար սպանվել է»<sup>6</sup>:

Իսկ 1961 թ. օգոստոսի 2-ին նա ԽՄԿԿ կենտկոմին առաջարկեց նաև իրականացնել սփյուռքահայ պարբերականների բաժանորդագրություն և անվանի գրողների երկերի տպագրություն, այդ թվում՝ Մոսկվայում, վճարումը կատարելով արտարժույթային ռուբլիներով<sup>7</sup>:

Այս համատեքստում էր նաև Յա. Զարոբյանի 1961 թ. սեպտեմբերի 7-ի նամակը ԽՄԿԿ կենտկոմ, ուր «... ծայրահեղ նպատակահարմար համարվեց ՀԽՍՀ-ում հատուկ սփյուռքահայ դպրոցների համար արևմտահայ լեզվով ... հայոց լեզվի, գրականության, պատմության և աշխարհագրության դասագրքերի պատրաստումը և տպագրումը կազմակերպելը»<sup>8</sup>: Այս ամենն ակնհայտորեն վկայում էր, որ արդեն 1961-ից Յա. Զարոբյանը (հավանաբար՝ ՀԽՍՀ մյուս ղեկավարներին դեռևս տեղյակ չպահելով) սկսել էր լրջորեն նախապատրաստվել Եղեռնի 50-ամյակի ոգեկոչման և Սփյուռքի հետ կապերի ամրապնդման գործին:

Ի դեպ, դեռ 1962 թ. ԽՍՀՄ պետանվտանգության կոմիտեն Յա. Զարոբյանին առաջարկել էր ստեղծել այսպես կոչված «Բեռլինի կոմիտեի» կամ «Արտասահմանում գտնվող հայրենակիցների հետ կապերի կոմիտեի» հայկական տարբերակ (ըստ էության՝ Պետական անվտանգության կո-

3 Գալլաթյան Կ., Հուշապատում, Եր., 1998, էջ 62:  
4 Նույն տեղում, էջ 67:  
5 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 84, գ. 48, թ. 48:  
6 ՀԱԱ, ֆ. 1, ց. 41, գ. 85, թ. 84:  
7 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 41, գ. 85, թթ. 139-140:  
8 ՀԱԱ, ֆ. 1, ց. 41, գ. 86, թ. 68:

միտեի մասնաձյուղ), բայց Յա. Զարոբյանը կտրուկ դեմ է եղել: Վերոնշյալ մարմինը զբաղվում էր Երկրորդ աշխարհամարտի հետևանքով արտասահմանում հայտնված ԽՍՀՄ ռազմագերի կամ վտարանդի քաղաքացիներով, ինչը սփյուռքահայության հետ բնավ կապ չուներ, ուստիև վտանգավոր համարվեց նրանց «ապահովության տեսակետից»<sup>9</sup>:

Սակայն օգտվելով այն փաստից, որ ԽՄԿԿ կենտկոմի քարտուղարությունը 1963 թ. ապրիլի 23-ին ««Հայրենիք վերադառնալու խորհրդային կոմիտեն» «Արտասահմանում հայրենակիցների հետ մշակութային կապերի խորհրդային կոմիտեի» վերակազմակերպելու մասին» որոշում էր ընդունել՝ ՀԿԿ կենտկոմն անմիջապես ձեռնարկեց Սփյուռքի կոմիտեի ստեղծմանը: ՀԿԿ կենտկոմի նախագահությունը 1964 թ. ապրիլի 10-ին «Արտասահմանում հայրենակիցների հետ մշակութային կապերի հայկական կոմիտե» անվամբ «Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտե» ստեղծելու մասին որոշում ընդունեց, որտեղ հանգամանակից նշվեցին նրա հիմնական խնդիրները և գործունեության շրջանակները: Միաժամանակ, համապատասխան պետական մարմիններին հրահանգվեց ըստ ամենայնի աջակցել և նպաստել նորաստեղծ հաստատության գործունեությանը: Ավելին, «Մշակութային կապերի հայկական ընկերության» օրգան «Սովետական Հայաստան» ամսագիրը հանձնվեց Սփյուռքի կոմիտեին որպես պաշտոնաթերթ<sup>10</sup>: Ուշագրավ է, որ սկզբում Սփյուռքի կոմիտեն պետք է լիներ «Կամավոր ընկերություն», այսինքն՝ հասարակական կազմակերպություն, սակայն նկատի ունենալով դրա կարևորությունը և համագային հնչեղությունը, որոշվեց այն դարձնել պետական մարմին:

Ինչ խոսք, այս կոմիտեի ստեղծումը ոչ միայն պետական-կազմակերպչական բարձրագույն հոգածության առարկա դարձրեց տվյալ ոլորտը, այլև էապես ընդարձակեց և զարգացրեց Հայրենիք-Սփյուռք կապերը: Ընդամենը մի քանի տարվա ընթացքում կատարվեց հսկայական աշխատանք: Այսպես, եթե 1958 թ. կապ էր պահպանվում 23 երկրների 53 կազմակերպությունների հետ, ապա 1965 թ. սկզբին միայն «Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի» գծով կապեր էին ձևավորվել 42 երկրների 860 կազմակերպությունների և առանձին անհատների հետ:

1964 թվականից սփյուռքահայ կազմակերպություններին պարբերաբար ուղարկվել է 24 անվանում թերթ և ամսագիր, 32 հազար գիրք, 3 անվանում 32 օրինակ հայկական խորհրդային շարժանկար, դպրոցների համար՝ 17 հազար դասագիրք, ֆիզիկայի և քիմիայի դպրոցական լաբորատորիաների համար՝ սարքավորումներ: Արտասահման հյուրախաղերի են մեկնել բազմաթիվ համույթներ: Սփյուռքահայ դպրոցների ուսուցիչների համար հանրապետությունում ստեղծվել էին որակավորման բարձրացման դասընթացներ: Երևանի բուհերում սովորում էին մոտ 200 սփյուռ-

9 Գալլաթյան Կ., Հուշապատում, էջ 82:

10 Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 44, գ. 42, թթ. 95-97: Սփյուռքի կոմիտեի կանոնադրությունը, կառուցվածքը և հաստիքները ՀԿԿ կենտկոմի նախագահությունը հաստատեց 1964 թ. ապրիլի 28-ին: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 44, գ. 43, թ. 40: Նախարարների խորհուրդը 1964 թ. մայիսի 26-ին որոշում ընդունեց այս մարմնի կազմավորման մասին: Կոմիտեի նախագահ նշանակվեց Վարդգես Համագասպյանը: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 94, գ. 191, թթ. 2-3; գ. 192, թ. 2:

քահայեր: Կարևորելով այս ամենը՝ 1965 թ. մարտի 2-ին ՀԿԿ կենտկոմի նախագահությունն ընդունեց «Արտասահմանում հայրենակիցների հետ մշակութային կապերի ընդլայնման միջոցառումների մասին» որոշում, որտեղ «գլխավոր խնդիրը համարվեց սփյուռքահայ առաջադիմական կազմակերպությունների հետ կապերի բազմակողմանի ընդլայնումը, նրանց ուժերը դաշնակցություն հակահեղափոխական բուրժուա-ազգայնական կուսակցության հետ պայքարում համախմբումը»<sup>11</sup>:

Վերջին հանգամանքը հաճախ օգտագործվում էր ԽՄԿԿ կենտկոմի առջև Հայրենիք-Սփյուռք կապերի հետագա ընդլայնման կարևորությունն ու հրատապությունը հիմնավորելու համար:

## 2. Պայքար Մեծ եղեռնի ոգեկոչման իրավունքի համար

1964 թ. հուլիսի 16-ին Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի տնօրեն Ծատուր Աղայանը, ՀԽՍՀ ԳԱ Արևելագիտության սեկտորի<sup>12</sup> վարիչ Հովհաննես Ինձիկյանը և ՀԿԿ կենտկոմի գաղափարախոսության բաժնի վարիչի տեղակալ Ջոն Կիրակոսյանը նամակ հղեցին ՀԿԿ կենտկոմին՝ ներկայացնելով «Արևմտյան Հայաստանում հայերի զանգվածային բնաջնջման 50-ամյակի միջոցառումների անցկացման մասին» 11 կետերից բաղկացած գիտաքարոզչական, մշակութային-զանգվածային միջոցառումների կազմակերպման, այդ թվում՝ «բնակչության միջոցների հաշվին» հուշարձանի կառուցման առաջարկություններ<sup>13</sup>:

Արդեն 1964 թ. դեկտեմբերի 13-ին Յա. Զարոբյանը «1915 թվականին հայերի զանգվածային բնաջնջման 50-ամյակի առթիվ միջոցառումների մասին» վերնագրված նամակ հղեց ԽՄԿԿ կենտկոմին: Կարևորելով սփյուռքի գոյությունը (որտեղ Եղեռնի 50-ամյակը պետք է նշվեր համընդհանուր կերպով), նրանում մատնանշվում էր նաև «հակահեղափոխական, ազգայնական «Դաշնակցություն» կուսակցությանը» հակազդելու և չեզոքացնելու առաջադրանքը: Այսինքն՝ Մեծ եղեռնի տարելիցը նշելու անհրաժեշտությունը հիմնավորելու համար նույնպես օգտագործվում էր ՀՅ Դաշնակցության դեմ պայքարի խնդիրը:

Ուստի ներկայացնելով կոնկրետ միջոցառումների ծրագիր և կարևորելով Եղեռնի 50-ամյակի նշման գաղափարաքաղաքական նշանակությունը, եզրակացվում էր. «...նպատակահարմար ենք գտնում այդ տարեթվի 50-ամյակը նշել Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության լիակատար հաղթանա-

11 Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 7, թթ. 19-23:

12 Հետագայում՝ ինստիտուտ:

13 Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 44, գ. 54, թթ. 66-73: Սա իբրև հիմք է ծառայել ԽՄԿԿ կենտկոմ ուղարկած Յա. Զարոբյանի նամակի համար: Այս նամակը գրեթե նույնությամբ (առանձին ոճական և ոչ էական ձևափոխություններով) նույն հեղինակները ՀԿԿ կենտկոմին հասցեագրել են նաև 1964 թ. սեպտեմբերի 17-ին, որի վրա կա Յա. Զարոբյանի հետևյալ մակագրությունը. «Հույժ գաղտնի: Ընկ. Խ. Խաչիսայանին: Խնդրում եմ բազմացնել և բաժանել կենտկոմի նախագահության անդամներին և անդամության թեկնածուներին: 18.09.1964»: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 44, գ. 73, թթ. 105-109:

կի, տնտեսության, մշակույթի, գիտության ոլորտներում վերածնված հայ ժողովրդի հսկայական ձեռքբերումների ցուցադրման նշանի ներքո: Այդ ամբողջ աշխատանքը պետք է իրականացվի այնպես, որպեսզի այն բացասաբար չազդի հարևան երկրների և մասնավորապես Թուրքիայի հետ ԽՍՀՄ փոխհարաբերությունների բարելավման քաղաքականության վրա և հետապնդի նպատակ, որպեսզի ժողովուրդների պատմության մեջ համանման ողբերգություն այլևս չկրկնվի»<sup>14</sup>:

Անշուշտ, կարևոր նշանակություն ունեցավ նաև Եղեռնի զոհերի հիշատակի կոթող կառուցելու մասին ՀԿԿ կենտկոմի նախագահության 1965 թ. փետրվարի 15-ի որոշումը<sup>15</sup>:

1965 թ. մարտի 9-ին ՀԿԿ կենտկոմի նախագահությունը հաստատեց «Հայերի կոտորածի 50-ամյակի նախապատրաստման հետ կապված միջոցառումների» հանգամանակից քարոզչական և գործնական աշխատանքների 15 կետից բաղկացած ծրագիր: Մասնավորապես, նրանում որպես առաջնահերթություն շեշտվում էր հետևյալը. «Աշխատավորության շրջանում անցկացնել նպատակալաց բացատրական աշխատանք այնպես, որպեսզի կոտորածի հիսունամյակի հետ կապված միջոցառումները աշխատավորության լայն խավերի վրա ուժեղացնեն գաղափարախոսական ազդեցությունը, ավելի վառ ցույց տան հայ ժողովրդի ձակատագրում Խորհրդային իշխանության պատմական դերը, լենինյան ազգային քաղաքականության իրականացման բարենպաստ ազդեցությունը, Խորհրդային պետության կողմից անշեղորեն իրականացվող խաղաղության և խաղաղ համագոյակցության քաղաքականության իմաստությունը և մարդասիրությունը: Թուրքիայում հայերի զանգվածային բնաջնջման հիսունամյակի տարեթիվը պետք է նշել ցեղասպանության մարդատյաց քաղաքականության դատապարտմամբ: Այն պետք է դասակարգային, մարքս-լենինյան դիրքերից, կենսահաստատ լավատեսության դիրքերից նշվի: Մշակել և իրականացնել բուրժուական գաղափարախոսության դեմ հակաքարոզչության ուժեղացման միջոցառումներ»<sup>16</sup>:

Հաստատված ծրագրի համաձայն՝ մասնավորապես անհրաժեշտ համարվեց իրականացնել հետևյալը. ՀԽՍՀ բոլոր քաղաքներ և շրջաններ ՀԿԿ կենտկոմի քարոզչական խմբերի ուղարկում, Երևանի ուսանող-երիտասարդության հետ ՀԽՍՀ ղեկավարության հանդիպումների և բոլոր հիմնարկ-ձեռնարկություններում դասախոսությունների կազմակերպում, զանգվածային լրատվության միջոցներով նահատակ գործիչների և ցեղասպանության քաղաքականության դատապարտման վերաբերյալ նյութերի հրապարակում, սփյուռքահայ մամուլում Խորհրդային Հայաստանի

14 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 44, գ. 54, թթ. 170-174: Այս նամակի պատճենը, ժամանակավոր ծանոթանալու և անպայման վերադարձնելու պայմանով, Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Վ. Ախունդովի խնդրանքով ՀԿԿ կենտկոմի հատուկ սեկտորի վարիչ Խ. Խաշայանը 1965 թ. ապրիլի 3-ին ուղարկել է Բաքու՝ շեշտելով «անձամբ նրան հանձնելու» անհրաժեշտությունը: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 44, թ. 47:

15 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 6, թ. 171: Այդ մասին ՀԽՍՀ Նախարարների խորհրդի կարգադրությունն ընդունվեց 1965 թ. մարտի 16-ին: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 96, գ. 88, թ. 2: Թեպետ կոթողի կառուցումը պետք է ավարտվեր 1965 թ., բայց բացումը կատարվեց միայն 1967 թ. նոյեմբերի 29-ին:

16 ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 18, թթ. 1-2, 4-5, 8-10:

նվաճումների քարոզում, գիտական նստաշրջանի և հասարակայնության ներկայացուցիչների ժողովի անցկացում: Միջոցառումների այս ծրագրի բոլոր կետերը, բացառությամբ Եղեռնի զոհերի հիշատակի կոթողի կառուցումից (որն ավարտվեց 1967 թ.), ընդհանուր առմամբ իրականացվեցին:

1965 թ. ապրիլի 20-ին ԵՊՀ մեծ դահլիճում անցկացվեց Եղեռնի 50-ամյակին նվիրված ՀԽՍՀ ԳԱ-ի և ԵՊՀ-ի միացյալ գիտական նստաշրջան, որը բացեց ԳԱ նախագահ Վ. Համբարձումյանը: Թվարկենք ելույթների թեմաները. 1. Ա. Եսայան, Հայ ժողովրդի գենոցիդը Օսմանյան կայսրության մեջ և միջազգային իմպերիալիզմը, 2. Մ. Մկրյան, Եղեռնի զոհ հայ մտավորականները, 3. Գ. Ստեփանյան, Արևմտահայերի ինքնապաշտպանական կռիվները, 4. Ե. Սարգսյան, Ռ. Սահակյան, Եղեռնի պատմության նենգափոխումը թուրքական պատմագրության մեջ, 5. Կ. Ուդումյան, Ժողովուրդների լենինյան բարեկամության անհաղթ ուժը, 6. Գ. Գալոյան, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և հայ ժողովրդի վերածնունդը<sup>17</sup>:

Հայոց ցեղասպանության 50-ամյակին առնչվող յուրաքանչյուր հարց, մանավանդ, երբ այն վերաբերում էր գաղափարաքաղաքական կողմին, գտնվում էր հանրապետության ղեկավարության ուշադրության կենտրոնում: Օրինակ՝ 1965 թ. ապրիլի 23-ին ՀԿԿ կենտկոմի նախագահությունը հաստատեց ՀԽՍՀ պետական տեսակետն արտահայտող պաշտոնական հոդվածը և հանդիսավոր նիստում Վ. Համբարձումյանի զեկուցումը<sup>18</sup>:

1965 թ. ապրիլի 24-ին Օպերայի և բալետի թատրոնում տեղի ունեցավ «1915 թվականի և եղեռնի զոհերի հիշատակին նվիրված Երևան քաղաքի հասարակայնության ներկայացուցիչների ժողով», որին ներկա էին ՀԽՍՀ ողջ ղեկավարությունը, Վազգեն Ա կաթողիկոսը: Արժե հիշատակել, որ ժողովին հնարավոր էր մասնակցել միմիայն ՀԿԿ կենտկոմի տրամադրած հատուկ հրավիրատուներով: Ժողովը հակիրճ ձառով բացեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Նազուշ Հարությունյանը: Նա մասնավորապես ասաց. «Հայ ժողովուրդն այսօր առաջին անգամ արժանավայել նշում է մեծ եղեռնի տարելիցը, նրա բյուրավոր անմեղ զոհերի պայծառ հիշատակը: ...Դատապարտելով գենոցիդի մարդակեր քաղաքականությունը, մենք դատապարտում ենք ոչ թե աշխատավոր ժողովրդին, այլ բռնակալ դահիճներին, այդ քաղաքականությունն ստեղծողներին և նրա գործադրողներին»<sup>19</sup>: Ժողովի մասնակիցները մեկ բույն լույսով հոտնկայա հարգեցին Եղեռնի զոհերի հիշատակը: Ժողովում զեկուցեց ԳԱ նախագահ Վիկտոր Համբարձումյանը:

**Տեղին է նշել, որ ելույթներն ավարտվում էին խորհրդային ավանդույթներին հարիր բուռն ծափահարություններով, իսկ ծրագրավորված համերգը տեղի չունեցավ միայն շենքի առջև հավաքված ցուցարարների բողոքից հետո:** Կարելի է փաստել, որ այս ժողովն ավելի

17 Տե՛ս «Սովետական Հայաստան», Եր., 1965, 21 ապրիլի:

18 Տե՛ս Գալոյան Գ., Կիրակոսյան Զ., Ողբերգությունից վերածնունդ, «Սովետական Հայաստան», 1965, 24 ապրիլի: ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 20, թ. 74:

19 «Սովետական Հայաստան», Եր., 1965, 25 ապրիլի:

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

2013  
հունիս, 2013  
ապրիլ-հունիս, 2013  
Ե (ԺԵ) քառի, թիվ 2 (42)

համահայկական հանդես  
ՎԷՄ

շատ խորհրդային պայմաններում սովորական դարձած «հանդիսավոր նիստ» էր, քան սգո և ոգեկոչման երեկո: Սակայն հարկ է նաև նշել, որ արդեն իսկ նման ժողովի գումարումը, երբ այդպիսի միջոցառումներն առանց բացառության հրավիրվում էին կոմունիստական տոների կամ հոբելյանների առիթով, անտարակույս ուներ կարևոր նշանակություն. իր կազմակերպական թերություններով հանդերձ, այն ողջ ԽՍՀՄ-ում առաջին ոչ խորհրդային պաշտոնական միջոցառումն էր՝ այն էլ զուտ ազգային թեմայով:

### 3. Հանդիսություններն ու ցույցերը

1965 թ. ապրիլի 24-ին Երևանում տեղի ունեցան համազգային երթեր և հանրահավաքներ, որոնց մասնակցեցին տասնյակ հազարավոր հայորդիներ: Ցույցը սկսվեց առավոտյան ժամը 10-ին Լենինի հրապարակում: Ելույթներ ունեցան ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Ա. Քոչինյանը, ԳԱ նախագահ Վ. Համբարձումյանը, ՀԿԿ Երևանի քաղկոմի քարտուղար Բ. Մուրադյանը, Գրողների միության նախագահ Էդ. Թովիչյանը, Ս. Խանգաղյանը: Ցուցարարները ՀԽՍՀ ղեկավարությանը փոխանցեցին ԽՄԿԿ կենտկոմին, ԽՍՀՄ Նախարարների խորհրդին և Գերագույն խորհրդի նախագահությանը հասցեագրված նամակ, որտեղ պարունակվում էին հետևյալ խնդրանքները. 1. Հայկական ԽՍՀ-ին հանձնել Ղարաբաղը, Նախիջևանը և ԽՍՀՄ տարածքում հայերով բնակեցված պատմականորեն հայկական հողերը, 2. հայրենադարձ հայերին բնակեցնել Նախիջևանում, 3. ազատել յոթ հայրենասերներին<sup>20</sup>, 4. արագացնել արտասահմանից հայերի հայրենադարձությունը:

Այնուհետև ցուցարարները «2.000.000», «Արդար լուծեք հայոց հարցը», «Ազատություն յոթ հայրենասերներին» պաստառներով և Կոմիտասի դիմանկարով ուղղվեցին դեպի Համալսարան, Կոմիտասի գերեզման, Օպերայի և բալետի թատրոնի շենք: Շարքերի առջևով տարվող գլխավոր տրանսպարանտի վրա գրված էր՝ «Ազնիվ հայեր, միացե՛ք մեզ»:

20 1963 թ. դեկտեմբերի վերջին և 1964 թ. հունվարին ձեռքակալված ու «հակախորհրդային գործունեության համար» 1964 թ. հունիսին դատապարտված, ուստիև «յոթ հայրենասերներ» անունը ստացած երիտասարդներն են. 1. **Հովհաննիսյան Մերուժան Արտաշեսի** – ծնված 1940 թ.: Էջմիածնում գտնվող ՀԽՍՀ ԳԱ տպարանի սրբագրիչ: Դատապարտվել է 5 տարվա ազատազրկման: 2. **Ամիրջանյան Խաչատուր Զումշուդի** – ծնված 1924 թ.: Երևանի Անասարյուծա-անասնաբուժական ինստիտուտի «Կադրերի համար» թերթի պատասխանատու քարտուղար: Դատապարտվել է 5 տարվա ազատազրկման: 3. **Բարսյան Վիգեն Ասատուրի** – ծնված 1940 թ.: ԵՊՀ քանասիրական ֆակուլտետի ուսանող: Դատապարտվել է 5 տարվա ազատազրկման: 4. **Սաֆարյան Խաչիկ Էլոյի** – ծնված 1932 թ.: Երևանի Գյուղատնտեսական ինստիտուտի հեռակա բաժանմունքի մեթոդիստ: Դատապարտվել է 4 տարվա ազատազրկման: 5. **Եղիան Գրիգոր (Հովհաննես) Հակոբի** – ծնված 1926 թ. Երուսաղեմում: Եգիպտոսից հայրենադարձվել է 1948 թ.: Էջմիածնի Հոգևոր ձեմարանի անգլերեն լեզվի և պատմության ուսուցիչ, սարկավագ, որոշ աղբյուրներում՝ վարդապետ: Դատապարտվել է 2 տարվա ազատազրկման: 6. **Քիրամիջյան Կարապետ Պողոսի** – ծնված 1940 թ. Բեյրութում: Հայրենադարձվել է Սիրիայից 1947 թ.: ԵՊՀ քիմիական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող: Դատապարտվել է 2 տարվա ազատազրկման: 7. **Կակոյան Էդուարդ Վարդանի** – ծնված 1936 թ.: Ղափանի շրջանի Եղվարդ գյուղի դպրոցի ուսուցիչ: Դատապարտվել է 1,5 տարվա ազատազրկման:



Ցուցարարների գլխավոր բացականչական լոզունգն էր՝ «Հողերը, հողերը»:

Դրանից հետո հավաքվելով Օպերայի և բալետի շենքի հարակից հրապարակում՝ ավելի քան հարյուր ցուցարարներ ներս մտան շենք, որպեսզի իրենց պահանջները ներկայացնեն: Շենքում հավաքված կուսակցական-խորհրդային վերնախավը, նրանց ասելիք չունենալով, հեռացավ, և միայն Վազգեն Ա. կաթողիկոսը փորձեց հանգստացնել երիտասարդներին: Չնայած դրան, թե՛ ապրիլի 24-ին և թե՛ հաջորդ օրը բոլոր խաղաղ ցուցարարների նկատմամբ ձեռնարկվեցին խորհրդային վարչահրամայական համակարգին հարիր պատժիչ գործողություններ: Պետք է ի սկզբանե նշել, որ ապրիլի 24-ին Երևանում տեղի ունեցած միտինգը և ցույցերը կրում էին միանգամայն խաղաղ բնույթ, ամենևին հակապետական նպատակներ չէին հետապնդում և միտված էին բացառապես ազգային հիմնախնդիրների վերհանմանը<sup>21</sup>:

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ



Ե (ԺԵ) փարի, թիվ 2 (42) ապրիլ-հունիս, 2013

1965 թ. ապրիլ 24-յան պատատաները

ՀԿԿ կենտկոմի նախագահությունը 1965 թ. ապրիլի 28-ին որոշում ընդունեց «Երևան քաղաքում 1965 թվականի ապրիլի 24-ին տեղի ունեցած անկարգությունների փաստերի մասին»: Հրահանգվեց «լուրջ բարելավել գաղափարախոսական աշխատանքը, հատուկ ուշադրություն դարձնել ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության ոգով

ՎԻՄ համահայկական հանդես

21 Որպես ասվածի վկայություն՝ տե՛ս ՀԿԿ կենտկոմին ուղղված ցույցերի մասնակից և ականատես գրող Մկրտիչ Արմենի 1965 թ. ապրիլի 26-ի մանրամասն զեկուցագիրը: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 170, ց. 1, գ. 165, թթ. 2-10:

դաստիարակությանը, խիստ պատասխանատվության ենթարկել ուսումնական հաստատությունների, հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներին, պարտավորեցնել ստեղծագործական կազմակերպությունների ղեկավարներին կատարելու համապատասխան հետևություններ: Միաժամանակ, հնչեցվեց խորհրդային համակարգին բնորոշ վարչահրամայական քննադատություն: Այսպես, նշվեց ՀԼԿԵՄ կենտկոմի, Երևանի քաղկոմի և շրջկոմների անբավարար աշխատանքը, ի ցույց դրվեցին<sup>22</sup> ՀԿԿ Երևանի քաղկոմի բյուրոն, ՀԼԿԵՄ կենտկոմի բյուրոն, Հասարակական կարգի պահպանման<sup>23</sup> նախարար Ս. Արզումանյանը: ՀԿԿ Երևանի քաղկոմին և քաղշրջկոմներին հանձնարարվեց քննել տեղի ունեցած անկարգությունների փաստերը, քննարկելով ցույցերին մասնակից կոմունիստների անհատական հարցերը՝ նրանց նկատմամբ պատժի խիստ միջոցների կիրառմամբ: Ավելին, Հասարակական կարգի պահպանման նախարարությանը, Դատախազությանը, Պետական անվտանգության կոմիտեին պարտավորեցրին հանգամանավից հետաքննություն անցկացնել, որպեսզի ցույցերի «հիմնական սկտողները և մեղավորները» պատասխանատվության ենթարկվեն<sup>24</sup>:



Ցուցարարները Լենինի անվան հրապարակում

1965 թ. ապրիլի 29–30–ին տեղի ունեցավ ՀԿԿ կենտկոմի ընդլայնված պլենումը: Նկատի ունենալով հարցի քաղաքական հրատապությունը և կարևորությունը՝ պլենումի կազմն աննախադեպ մեծաքանակ էր: Բա-

22 Կոմկուսի համակարգում կուսակցական տույժի տեսակ, որին հաջորդում էր նկատողությունը:

23 Այդ ժամանակ Ներքին գործերի (ուստիկանության) նախարարության անվանումը:

24 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 20, թթ. 28–35:

վական է հիշատակել, որ ներկա էր հանրապետական և շրջանային կուսակցական, խորհրդային, տնտեսական ողջ ղեկավարությունը՝ ՀԿԿ կենտկոմի 99 անդամներից 90-ը, անդամության 37 թեկնածուներից 32-ը, վերստուգիչ հանձնաժողովի 31 անդամներից 28-ը, կենտկոմի ոչ անդամ շրջկոմների առաջին քարտուղարները, շրջխորհուրդների գործկոմների նախագահները, գյուղական արտադրական վարչությունների պետերը, ՀԽՍՀ գյուղատնտեսական մարմինների պատասխանատու աշխատողները, ընդհանուր առմամբ՝ 193 հոգի: Այսինքն՝ նման կազմով պլենումն արդեն իսկ յուրօրինակ կուսակցական համագումարի դերակատարություն ուներ:

ՀԽՍՀ կուսակցական ղեկավար Յա. Զարոբյանն իր ընդարձակ գեկուցման մեջ տեղեկատվություն տալով Հայոց ցեղասպանության 50-ամյակի նշման արդյունքների և ապրիլի 24-ին Երևանում տեղի ունեցած «անկարգությունների փաստերի» մասին, մասնավորապես կարևորեց հետևյալը. «Կենտկոմի Նախագահությունը երկարատև ժամանակ ուսումնասիրեց կոտորածի 50-ամյակի նշման հարցը: Երկարատև մտորումներից հետո Կենտկոմի Նախագահությունը ԽՄԿԿ Կենտկոմ միջոցառումների ծրագիր ներկայացրեց: ԽՄԿԿ Կենտկոմը հանձնաժողով առանձնացրեց ընկերներ Սուսլովի, Պողոցորնու, Գրոմիկոյի և ուրիշների կազմով: Այդ հարցի երկարատև ուսումնասիրությունից հետո, ԽՄԿԿ Կենտկոմը թույլատրեց մեզ նշել հայերի կոտորածի 50-ամյակը՝ ցեղասպանության քաղաքականության դատապարտման, մեր կուսակցության գլխավոր գծի լայն քարոզչության՝ ուղղորդված խաղաղության և ժողովուրդների միջև բարեկամության, ինչպես նաև Հոկտեմբերյան Մեծ հեղափոխության հաղթանակից և Հայաստանում Խորհրդային իշխանության հաստատումից հետո հայ ժողովրդի վերածննդի նշանի ներքո: Ըստ հարցի էության պետք է ասեմ, որ Կենտկոմի Նախագահությանը պետք էր կամքի մեծ ուժ ունենալ, որպեսզի բարձրացներ այդ հարցը: Մենք մեր կուսակցական պարտքը համարեցինք նշել այդ տարեթիվը, որպեսզի Կենտկոմի շուրջ համախմբենք մեր ժողովրդին: Եթե մենք չնշեինք, մեր ժողովուրդը չէր հասկանա»<sup>25</sup>:

Երկօրյա քննարկումներից հետո ՀԿԿ կենտկոմի պլենումն ընդունեց հետևյալ որոշումը. «1. Հաստատել հայերի կոտորածի 50-ամյակի կապակցությամբ անցկացված ՀԿԿ Կենտկոմի Նախագահության միջոցառումները և ՀԿԿ Կենտկոմի Նախագահության ապրիլի 28-ի «1965 թ. ապրիլի 24-ին Երևանում տեղի ունեցած անկարգությունների փաստերի մասին» որոշումը: 2. Հանձնարարել Կենտկոմի Նախագահությանը մշակել և իրականացնել կոնկրետ միջոցառումներ աշխատավորության՝ հատկապես երիտասարդության, շրջանում գաղափարա-քաղաքական, դաստիարակչական աշխատանքների հետագա արմատական ուժեղացման, ինչպես նաև հանրապետության ադմինիստրատիվ մարմինների աշխատանքների բարելավման ուղղությամբ»<sup>26</sup>:

25 ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 1, թթ. 2-4; գ. 2, թթ. 31-63, 71; գ. 4, թթ. 34-49, 61-64:  
26 Նույն տեղում:

#### 4. Մայր Աթոռի և Գրողների միության դերը

Մեծ Եղեռնի 50-ամյա տարելիցի հետ կապված՝ հարկ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի քայլերին: 1964 թ. օգոստոսի 17-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը «Ապրիլյան Մեծ Եղեռնի 50-ամյակի առթիվ» հրապարակած կոնդակում նշելով, որ «Մեր նահատակները մեռան ապրելու յոյսով և հայ հայրենիքի վերածնունդի տեսիլքներով», մասնավորապես հրահանգում էր. «ա. որ յառաջիկայ 1965 տարին հռչակուի մեր Եկեղեցիին և համայն մեր ժողովուրդին համար ազգային սուգի և աղօթքի տարի, բ. որ Հայաստանեայց բոլոր եկեղեցիներուն մէջ, ապրիլ 24-ին տեղի ունենան կրօնական յատուկ արարողութիւններ և հոգեհանգստեան պաշտօններ, աղօթելու համար մեր բիրաւոր նահատակներու հոգւոց խաղաղութեան և լուսաւորման համար, դ. որ բոլոր հայ եկեղեցական համայնքներուն և գաղութներուն մէջ, Հայ Եկեղեցւոյ հովանիին ներքև, անխտիր բոլոր հայկական միութեանց համերաշխ գործակցութեամբ, կազմակերպուին համազգային յուշի և յարգանքի հանդիսաւոր հաւաքոյթներ, դասախօսութիւններ, գրական-գեղարվեստական նիստեր հայ և այլազգի հասարակութեանց համար, նուիրած Ապրիլյան Եղեռնին»<sup>27</sup>:

Վազգեն Առաջինը Եղեռնի 50-ամյակի առթիվ 1964 թ. սեպտեմբերի 24-ին նամակներ հղեց Հռոմի Պողոս Զ պապին, Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիին, Քենտրբերիի Արքեպիսկոպոս և Համայն Անգլիայի Միտրոպոլիտ Մայքլ Ռեմզիին, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար Վիստեր դ'Նուֆտին՝ փաստելով, որ «Նորագույն պատմության մեջ առաջին ցեղասպանության մեծ ոճիրն էր, որ կատարվեց: Նահատակված հայ ժողովրդի միակ մեղքն էր, որ նա կամեցել էր այս աշխարհի վրա ապրել իբրև քրիստոնյա և ազատ ազգություն, խորհելով, թե առաջնորդված քրիստոնեական գուրի և արդարության զգացումից, նրանք պիտի կամենան ապրիլի 24-ին իրենց «աղոթքները միացնել մեր աղոթքներին՝ երկու միլիոն նահատակ քրիստոնյա հայերի հոգիների խաղաղության համար»<sup>28</sup>:

Իսկ արդեն 1965 թ. ապրիլի 24-ին Եղեռնի 50-ամյակի առթիվ հանդիսություններ տեղի ունեցան Մայր Աթոռում: Վազգեն Առաջինը պատարագ մատուցեց, կատարվեց հոգեհանգիստ «Հայ ժողովրդի հավաքական մարտիրոսագրության հիսունամյակին նվիրված», ապա Մայր Տաճարի հյուսիսային կողմում տեղի ունեցավ Եղեռնի նահատակների հուշարձանի հիմնարկեքի օրհնություն, որն ավարտվելու էր 1965 թ. հոկտեմբերին: Երեկոյան Վազգեն Առաջինն իր շքախմբով ներկա եղավ Օպերայի և Բալետի թատրոնում տեղի ունեցած հանդիսավոր նիստին: Ապրիլի 25-ին Մայր Տաճարում հանդիսավոր պատարագ մատուցվեց, ապա գումարվեց հուշի նիստ՝ նվիրված Եղեռնի 50-ամյակին<sup>29</sup>: Տեղին է հիշատակել, որ հանդիսություններին ներկա էին ՀԽՍՀ Նախարարների խորհրդին առ-

27 «Էջմիածին», 1964, Ը-Թ, էջ 3-5:

28 «Էջմիածին», 1964, ԺԱ, էջ 8-9:

29 Տեն «Էջմիածին», 1965, ԵԶԷ, էջ 106-113:

ընթեր «Հայ եկեղեցու գործերի խորհրդի» նախագահ Կ. Դավաթյանը, անվանի մտավորականներ Մ. Սարյանը, Կ. Մելիք-Օհանջանյանը, Ա. Առաքելյանը, Կ. Զարյանը: «Ապրիլյան Մեծ Եղեռնի հիսնամյակի առթիվ» և «Եղեռն ու վերածնունդ» զույգ խմբագրականներով թեմային անդրադարձավ Մայր Աթոռի «Էջմիածին» պաշտոնաթերթը<sup>30</sup>:

1965 թ. հունիսի 13-ին Պլովդիվի Հայոց ազգային գերեզմանատանը Վազգեն Առաջինի հանդիսադրությամբ տեղի ունեցավ Եղեռնի նահատակների հիշատակի հոգեհանգիստ և նահատակաց հուշարձանի բացում, որին ներկա էր նաև Բուլղարիայի Կրոնական գործերի խորհրդի նախագահ Մ. Քյուչուկովը<sup>31</sup>:

1965 թ. հոկտեմբերի 31-ին Վազգեն կաթողիկոսը ողջ հոգևոր դասի և հյուրերի ուղեկցությամբ Մայր Տաճարի հյուսիսային կողմում բացեց Եղեռնի նահատակների հուշարձանը, որի հեղինակը անվանի ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանն էր: Հուշարձանի քարե պատվանդանի վրա գրված էր. «Խաչքար Աղոթքի և Ուխտի, Ի Հիշատակ 1915 թվի Ապրիլյան Եղեռնի Հայ Նահատակների»: Հուշարձանի երկրորդ երեսի վրա փորագրվել էին Վանի, Մուսա լեռան, Շապին Գարահիսարի, Հաճընի, Մարաշի, Եդեսիայի, Զեյթունի, Սասունի և Սարդարապատի անունները:

Բացմանը Վազգեն Առաջինը մասնավորապես ասաց. «Այս տարի, ապրիլի 24-ին, Մենք օրհնեցինք այս հողը, որպեսզի այստեղ մարմին առնե կոթող մը, նվիրված 1915 թվականի հայոց մեծ եղեռնի զոհերու հիշատակին: Ահա այդ կոթողը, խորհրդանիշը հայոց վշտին, խորանը մեր աղոթքին, վե՛ր մեր ուխտին: ... Այս օրեն սկսյալ սրբավայր մըն է այստեղ, նվիրված մեր ողբերգական անցյալին, մեր զոհված եղբայրներու և քույրերու հիշատակին, մեր ժողովրդի ինքնապաշտպանության հերոսամարտերուն, մեր ազգին ուխտին»<sup>32</sup>: Այս առումով հետաքրքիր է այն փաստը, որ միջոցառումը զուգադիպեց Վազգեն Առաջինի գահակալության 10-ամյակին, որին ներկա էին նաև քույր եկեղեցիների պետերը:

Հայոց Ցեղասպանության 50-ամյակը նշելու գործընթացի քննության ընթացքում հարկ է առանձնահատուկ անդրադառնալ Հայաստանի գրողների գործունեությանը, նրանց դիրքորոշմանը: Անտարակույս, հայ գրողները համազգային զարթոնքի առաջամարտիկներից էին: 1965 թ. ապրիլի 23-ին Գրողների տանը անցկացվեց նահատակ գրողների հիշատակին նվիրված երեկո: Այն բացեց Ստեփան Զորյանը, ելույթ ունեցան Վաղարշակ Նորենցը, Գևորգ Էմինը, Անահիտ Սահինյանը, Գրիգոր Քեշիշյանը, Հրաչյա Հովհաննիսյանը, Սիլվա Կապուտիկյանը: Լուսավորության աշխատողների տանը կազմակերպվեց երեկո՝ նվիրված «1915 թվին թուրք ջարդարարների կողմից գազանաբար սպանված հայ գրողների հիշատակին», որտեղ ոգեկոչվեցին մեր ազգի մեծ նահատակները՝ Դ. Վարուժան, Գր. Զոհրապ, Ռ. Սևակ, Սիամանթո, Ռ. Զարդարյան ...<sup>33</sup>:

Նահատակ հայ մտավորականների մասին տպագրվեցին բազմաթիվ

30 Տե՛ս «Էջմիածին», 1964, ԺԱ, էջ 3-5; 1965, ԲԳԴ, էջ 3-5:

31 Տե՛ս «Էջմիածին», 1965, Ը-Թ, էջ 19:

32 «Էջմիածին», 1965, ԺԱ-ԺԲ, էջ 44-49:

33 Տե՛ս «Գրական թերթ», 1965, 23 ապրիլի, N 17, էջ 4:

հողվածներ, ուր հանիրավի մոռացությունից հետո ըստ արժանվույն գնահատվեցին նրանց ստեղծագործությունները: 1965 թ. մարտի 9-ին ՀԿԿ կենտկոմի նախագահության որոշմամբ Երևանի Շահումյանի շրջանի N 89 միջնակարգ դպրոցը անվանակոչվեց Դանիել Վարուժանի անունով<sup>34</sup>: Ընդհանրապես, խորհրդային իշխանության տարիներին, որպես կանոն, ուսումնական հաստատություններն անվանակոչվում էին հայտնի կոմունիստական գործիչների, իսկ եզակի դեպքերում՝ պաշտոնական ճանաչում գտած անվանի մտավորականների անուններով: Մինչդեռ 1965 թ. նախորդող շրջանում ոչ միայն անտեսված էր Հայոց Եղեռնի երևույթը, այլև մոռացության էին մատնված նահատակ արևմտահայ գրողներն ու նրանց ստեղծագործությունները: Ուստի ՀԿԿ կենտկոմի կողմից դպրոցի անվանակոչման փաստն ինքնին պաշտոնական ուղի էր բացում նահատակ մյուս գրողների «արդարացման» համար, ինչի կարիքը նրանք երբևէ չեն ունեցել:

Շեշտենք, որ իր ապրիլի 23-ի համարը «Գրական թերթ»-ն ամբողջությամբ նվիրել էր Եղեռնին («Վերածնված իմ Հայաստան» խմբագրական, Գևորգ Էմինի «Եղել է, կա ու կլինի», Վարդան Պարսամյանի «Հերոսական դրվագներ» հողվածները): Այս առումով պետք է շեշտել, որ ՀԽՍՀ ռուսալեզու պաշտոնական մամուլը Եղեռնի թեմային, միջոցառումների լուսաբանությանն անդրադարձավ չափազանց հպանցիկ, մինչդեռ քարոզչական նկատառումներից ելնելով՝ միանգամայն հակառակը պետք է լիներ:

Առանձնակի պետք է անդրադառնալ ԽՄԿԿ կենտրոնական պաշտոնաթերթ «Պրավդա»-ի դիրքորոշմանը: Հայտնի է, որ խորհրդային ցեղասպանագիտության հիմնադիր, ակադեմիկոս Մ. Ներսիսյանը 1965 թ. ապրիլին նախորդող և հաջորդող շրջանում գտնվում էր Մոսկվայում իր հանրահայտ ժողովածուի<sup>35</sup> հրատարակության նախապատրաստման նպատակով: Այդ ընթացքում Հայոց ցեղասպանության վերաբերյալ նրա հիմնավոր «Գենցիդըր ամենաձանր հանցագործությունն է մարդկության հանդեպ» հողվածը ոմն իրավաբանության դոկտոր Ուշակովի համահեղինակությամբ և ամբողջովին խեղաթյուրված ձևով հրապարակվեց «Պրավդա»-ում: Այդտեղ խորհրդային գրաքննության «շնորհիվ» Հայոց ցեղասպանության թեման միանգամայն տարրալուծվել էր և ամփոփվել ընդամենը հետևյալ երկու պարբերության մեջ. «Ձգտելով ինչ գնով էլ լինի իրագործել իրենց պլանները Մերձավոր Արևելքում, Գերմանիայի մոնոպոլիստական խմբերը բացեիբաց գենցիդը հրահրեցին Թուրքիայում: Հիսուն տարի առաջ երիտթուրքերի կառավարությունը բնաջնջեց մոտավորապես մեկ ու կես միլիոն հայ: Սկզբում գաղտնի և ուխտադրուժ կերպով ոչնչացվեցին հայ մտավորականությունը և տղամարդ բնակչությունը: Ապա կոտորածի ոգեշնչողները անցան կանանց և երեխաների մեթոդիկ ոչնչացմանը: Հարյուր հազարավոր հայեր ստիպված եղան

34 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 18, թ. 35: ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը 1965 թ. մարտի 23-ին ընդունեց այդ որոշումը:

35 Տե՛ս «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու», Մ. Գ. Նեսիսյանի խմբագրությամբ, Եր., 1966, 1982 (ռուսերեն), 1991 (հայերեն):

վախել օտար երկրներ: Շատերը գոհվեցին, փորձելով փրկվել կատաղի հետապնդումներից: Այդ եղեռնի կազմակերպիչները ոչ քիչ աղետներ պատճառեցին նաև թուրք ժողովրդին: Իրենց ոճրագործությունների համար նրանք արժանացան Թուրքիայի բոլոր առաջադեմ ուժերի, երկրի աշխատավորական լայն մասաների ատելությանը: Առաջին համաշխարհային պատերազմում գերմանական իմպերիալիզմի ջախջախումից հետո թուրք ժողովուրդը նրանց վնդեց քաղաքական ասպարեզից: Նոր Թուրքիան, վարելով հակաիմպերիալիստական քաղաքականություն, բարիդրացիական հարաբերություններ հաստատեց երիտասարդ սովետական պետության հետ: Սովետական ժողովուրդը անկեղծորեն ձգտում է, որ այդ հարաբերությունները հաջողությամբ զարգանան, ավելի ու ավելի բարեկամական դառնան»<sup>36</sup>:

Իր հերթին, ՀԽՍՀ գլխավոր պաշտոնաթերթ «Սովետական Հայաստան»-ի խմբագրականն էլ ընդհանուր առմամբ շարադրված էր «պրոլետարական ինտերնացիոնալիզմի» ոգով. «Սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում իր նոր կյանքն է կառուցում հայ ժողովուրդը: Զինվորագրվելով լենինյան պարտիայի գաղափարներին, ռուս մեծ ժողովրդի, եղբայրական մյուս ժողովուրդների անշահախնդիր օգնությամբ Հայաստանի աշխատավորներն անցած քառասունհինգ տարիների ընթացքում անձանաչելիորեն փոխեցին իրենց հինավուրց լեռնաշխարհի դեմքը: Այս օրերին մեր ժողովուրդը նշում է իր պատմության ամենածանր շրջանի՝ օսմանյան Թուրքիայի կառավարողների կողմից 1915 թվին իրականացրած եղեռնի տարելիցը: Եղբայր ժողովուրդների կողքին, եղբայրությանն ապավինած, եղբայրությամբ հզոր ու երջանիկ ապրում ու ստեղծագործում է հայ ժողովուրդը»<sup>37</sup>:

Ցավալիորեն, ապրիլի 24-ի ցույցին և ընդհանրապես՝ Եղեռնի 50-ամյակի միջոցառումներին աշխույժ մասնակցություն չունեցավ ժամանակի խորհրդահայ մտավորականության ազդեցիկ և հեղինակավոր առաջնորդը՝ իր խիզախ դիրքորոշմամբ հայտնի ՀԿԿ կենտկոմի անդամ Հրաչյա Քոչարը: Ծանր հիվանդության հանդիման նրա սիրտը տեղի տվեց մահացավ մայիսի 3-ին<sup>38</sup>:

1965 թ. ապրիլի 27-ին տեղի ունեցավ Հայաստանի Խորհրդային գրողների միության կուսկազմակերպության դռնբաց ժողովը<sup>39</sup>: Այդ ժողովին ներկա էին Կոմկուսի 75 անդամներ, նախագահը կուսակցական բյուրոյի առաջին քարտուղար **Սերո Խանգադյանն** էր, քարտուղարը՝ **Ստեփան Ալաջաջյանը**: «Եղեռնի 50-ամյակի նշման մասին» զեկուցեց միության վարչության պատասխանատու քարտուղար **Էդ. Թոփյանը**: Նա շեշտեց, որ 50-ամյակի նշումը պետք էր, և որ այն «կապված էր ավելի քան մեկ ու կես միլիոն հայության բախտի հետ, որ դեգերում էր արտասահմանում»:

36 **Ներսիսյան Մ., Ուշակով Ն.**, Գենցիդը ամենածանր հանցագործությունն է մարդկության հանդեպ, «Պրավդա», 1965, 24 ապրիլի, N 115, էջ 4: Հայերեն թարգմանությունը տե՛ս «Սովետական Հայաստան», Եր., 1965, 25 ապրիլի, N 97:

37 «Սովետական Հայաստան», 1965, 25 ապրիլի:

38 Հայոց Ցեղասպանության վերաբերյալ նրա դիրքորոշումը տե՛ս **Հր. Քոչար**, Մտորումներ, «Սովետական Հայաստան», 1965, 24 ապրիլի:

39 Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 170, ց. 1, գ. 158, թթ. 29-78:

Նկարագրելով Երևանում ապրիլի 24-ին տեղի ունեցած ցույցերը՝ նա օգտագործեց «խուլիգաններ» ձևակերպումը. «Նրանք ձեռք էին բարձրացրել մեր կուլտուրայի տաճարի (նկատի ունեք օպերայի շենքը) վրա, նրանք թույլ էին տվել ամենակոպիտ անկարգություն»։ Մասնակիցներին Էդ. Թոփչյանը պիտակավորեց որպես «հանցագործ տարրեր», «տականքներ», «անարժան մարդիկ», «թափթփուկ էլեմենտներ», «հակահասարակական տարրեր»։ Նա միանշանակ առաջարկում էր դատապարտել նրանց<sup>40</sup>։

**Սիլվա Կապուտիկյանի** խորին համոզումն էր. «Անհրաժեշտ էր, պատմական և քաղաքական մոմենտի թելադրանք՝ անդրադառնալ այդ տարեթվին, նշել այն պետականորեն, անհրաժեշտ լայնությամբ և լրջությամբ»։ Նա փաստարկված հիմնավորեց Եղեռնի 50-ամյակի նշման կարևորությունը, իրավացիորեն արձանագրեց ապրիլի սկզբին ծրագրավորված միջոցառումների սառեցման և մամուլում տիրող անհարկի լուծյան փաստը, ինչը առարկայաբար ժողովրդի շրջանում «նորից ստեղծեց լարված վիճակ, կրքերի բորբոքում»։ Մինչդեռ, նրա կարծիքով. «Այն, ինչ արվեց, արվեց շատ մասնակի, կիսաբերան ասված խոսքով, կիսատպատ միջոցառումներով»։ Նա կտրուկ դեմ էր այն կարծիքին, որ ապրիլի 24-ի ցույց-շարժումը երկու տասնյակ երիտասարդի գործն էր, այլ «ողջ ժողովրդի, քանզի բոլորն ուզում էին ասել՝ իրար, ամենքին, աշխարհին, թե՛ տեսեք, ի հեճուկս ցեղասպանների և նրանց լեռնայն հովանավորողների, ի հեճուկս ամենի ու ամենքի, մենք ապրում ենք, մենք ծնվեցինք, մենք կանք»։ Այս առումով տարերային շարժման խորհուրդը Սիլվա Կապուտիկյանը համարեց «առողջ, բարձր, համամարդկային»։ Նշելով, որ գրողը «ժողովրդի ձգտումների արտահայտողն է, պատասխանատու ոչ միայն ընդդեմ, օրվա, տարվա, այլև տասնամյակների, հիսնամյակների, գալիքի առջև», Ս. Կապուտիկյանը գտնում էր, որ պետք է հավանություն տալ ՀԿԿ կենտկոմի վերջին տարիների գաղափարախոսական աշխատանքներին, ու խնդրում ազատ արձակել «բոլոր իսկապես անմեղ երիտասարդներին, քանզի ստեղծված հիվանդագին մթնոլորտի համար առաջին հերթին մեղավոր են մեծահասակները»<sup>41</sup>։

Եղեռնից ազատված «խլյակ» **Սողոմոն Տարնոցի** խորին համոզմամբ շեշտեց. «Չնշել, նշանակում էր ֆիզիկապես կորցնել սփյուռքահայությանը, որ հեռացել էր իր հայրենիքից այդ եղեռնի պատճառով, և կկորցնենք սփյուռքահայության վստահությունն այն իմաստով, որ մենք կուրանայինք մեր պատմության այդ էջը»։ Նա ևս կտրուկ դեմ էր ցույցերը «նացիոնալիստական» համարելուն<sup>42</sup>։

Ցույցին մասնակցած **Բաղիշ Հովսեփյանը** նշեց, որ բոլոր գրողները պետք է այնտեղ լինեին, բայց փոխարենը. «Մենք շատ վախեցանք մեր աթոռներից, մեր պաշտոններից, չկարողացանք ինչպես պետքն է կազմակերպել սգահանդեսը»։ Նրա կարծիքով՝ պետական դրոշի վրա «որպես սգո նշան մի սև երիզ անցկացնելուց ոչ կոմունիստական շարժումը կտուժեր, ոչ սոցիալիզմի կառուցումը, ոչ էլ մեր ողջախոհությունը»։

40 Տե՛ս նույն տեղում։

41 Նույն տեղում։

42 Տե՛ս նույն տեղում։



«Հպարտության զգացումով» ցուցարարների շարքում քայլած **Սևակ Արզումանյանը** դատապարտեց «սև դուրբինկաներով (մահակ) միլիցիոներների գռեհիկ գործողությունները, երիտասարդների և անչափահասների անխնա ծեծը»: Նա քննադատեց Մոսկվայի կենտրոնական մամուլի պահվածքը, որը բազմիցս գրելով «ալժիրցի Ջամիլեի, հույն Մանոլիս Գլեզոսի, Կոնգոյի ժողովրդի մասին», լրության մատնեց հայերի եղեռնի 50-ամյակը, իսկ «Պրավդա»-ի հոդվածը համարեց «համաշխարհային գեներցիոնի ամբողջ հարցերի մեջ մեծ եղեռնի փաստի տարրալուծում»: Նման մոտեցումը ուշագրավ կերպով նա բացատրեց «երկու չափի, երկու կշեռքի սկզբունքի» կիրառմամբ<sup>43</sup>:

**Անահիտ Սահինյանը** խստորեն քննադատեց այն գրողներին («որոնց ծափահարելուց մազուկալալել (կոշտուկներով պատվել-Ա.Լ.) էին այդ երիտասարդների ձեռքերը»), որոնք բացակա էին ցույցից և Լենինի հրապարակում հավաքված խոսքի սպասող երիտասարդության առջև ելույթ չունեցան. «Ցավի հետ գլուխ չունեին, նրանց գլուխները միայն դափնիներ կրելու համար են: Սիրում են ամբիոններ, ահա ամբիոն էր»: Արդյունքում, ըստ նրա վկայության. «Հրապարակում ծովացած այդ երիտասարդներն ու պատանիները, որ ուրիշ չէին, այլ մեր երեխաները, մեր քույրերի ու եղբայրների երեխաները, ամբողջ օրը անգլուխ թափառում էին՝ մեկ դեպի պանթոն, մեկ դեպի ուսանողական թաղամաս, ոչ մի կերպ տեղ չգտնելով իրենց համար»: Այս առումով, միանշանակ ընդունելի էր նրա եզրակացությունը. «Եթե պետք է դատապարտվի որևէ մեկը, ապա եկեք դատապարտենք ինքներս մեզ, որ չկարողացանք այդ երիտասարդների ու պատանիների զգացումների խորքը թափանցել»<sup>44</sup>:

**Համո Սահյանը** սրտացավորեն հավաստեց. «Այս, սառը ջուր ենք բաց թողել նրանց վրա, և ուզում ենք նրանց դատապարտել: Մեղք չէն այդ երիտասարդները: Մենք ինքներս մեզ պիտի դատապարտենք, որ չկազմակերպեցինք, և նրանք կմնային ետևում: Բարբարոսություն ցուցաբերեցին միլիցիոներները, և պիտի դատապարտենք ջահելներին»<sup>45</sup>:

**Սաղաթել Հարությունյանը** քննադատեց ԽՄԿԿ կենտկոմին, որ «չհասկացավ, թե 1915 թ. ապրիլի 24-ին ինչպիսի դժբախտություն է պատահել հայ ժողովրդի հետ»: Նա քննադատեց նաև ՀԿԿ կենտկոմին. «Այո, հենց նրանք վատ կազմակերպեցին ամեն ինչ»<sup>46</sup>:

**Վաղարշակ Նորենցի** վերջնական համոզումն էր. «Մեկ խոսքով, եղեռնի 50-ամյակը չնշվեց պատշաճ ձևով»:

Վերջում ժողովն իր ընդունած բանաձևով հավաստեց, որ «Պատմության մեջ իր նախընթացը չունեցող հայ եղեռնական կոտորածների 50-ամյա տարելիցը նշելու մասին որոշումը միանգամայն տեղին է և համարում է ճիշտ»: Նշվեցին «կազմակերպչական բնույթի լուրջ թերությունների», զանգվածային լրատվության միջոցներով «անբավարար լուսաբանումների» պարագաները: Մինչդեռ, որոշման 5 կետերից և ոչ մեկում

43 Տե՛ս նույն տեղում:  
44 Նույն տեղում:  
45 Նույն տեղում:  
46 Նույն տեղում:

չարտացոլվեց Հայոց ցեղասպանության և նրա 50-ամյակի քաղաքական գնահատականը: Ընդհանուր առմամբ, համեմատելով ելույթների ոգին ու հնչեցված քննադատությունները ընդունված բանաձևի ձևակերպումների հետ, վերջինս պետք է համարել բավականին թույլ՝ համաժողովրդական ոգևորության և առանձին գրողների հայրենասիրական դիրքորոշման համապատկերում<sup>47</sup>:

## 5. Հայրենիք–Սփյուռք կապերի ընդլայնումը և Արցախի հարցը

Եղեռնի 50-ամյակի առիթով Բեյրութի «Նոր սերունդ» մշակութային միության վարչությունը Լիբանան էր հրավիրել պատմագիտության դոկտոր Աբամայի Մնացականյանին և Պարույր Սևակին, սակայն ՀԿԿ կենտկոմը նպատակահարմար չգտավ նրանց այցն այն պատճառաբանությամբ, որ «հանրապետությունում պետք է նշվի կոտորածի 50-ամյակը»: Այս պարագան վերաբերում էր նաև Բեյրութի Թեքեյան մշակութային միության վարչության կողմից ԳԱ նախագահ Վիկտոր Համբարձումյանի, երգչուհի Զարուհի Դոլուխանյանի, Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնի հրավերին<sup>48</sup>:

Մյուս կողմից, ՀԿԿ կենտկոմն ընդունեց Վահան Թեքեյանի մահվան 20 և Սեմա Աթմաճյանի մահվան 25-ամյակները նշելու վերաբերյալ «Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի» նախագահ Վ.Համազասպյանի առաջարկությունը<sup>49</sup>: ՀԿԿ կենտկոմի կողմից նման դրական վերաբերմունք ցուցաբերվեց նաև Նոր Արաբկիրի հիմնադրման 40 և Նոր Հաճնի հիմնադրման 50-ամյակները նշելու առաջարկությունների հանդեպ<sup>50</sup>:

1965 թ. հունվարի 26-ին ՀԿԿ կենտկոմի նախագահությունը «Սփյուռքահայ գաղութներում և առաջին հերթին աճող սերնդի շրջանում Խորհրդային Հայաստանի ձեռքբերումների քարոզչության ուժեղացման նպատակով» որոշեց 1965 թ. ամռանը 45 օրով կատարելագործման և վերապատրաստման դասընթացների հրավիրել 30 սփյուռքահայ ուսուցչի<sup>51</sup>: Այս ենթատեքստում հիշատակենք, որ 1965 թ. մարտի 9-ին ՀԿԿ կենտկոմի նախագահությունը, հաշվի առնելով 1964 թ. փորձը, որոշեց 1965 թ. ամռանը ՀԽՍՀ պիոներական ճամբարներում հանգստի հրավիրել 60 սփյուռքահայ դպրոցականների (այդ թվում՝ Լիբանանից՝ 15, Սիրիայից՝ 13) մեկ ամիս ժամկետով<sup>52</sup>: Տեղին է շեշտել, որ այդուհետ սփյուռքահայ ուսուցիչների և երեխաների՝ ՀԽՍՀ հրավիրումը կանոնավոր կերպով ամեն

47 Նույն տեղում:

48 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 67, թթ. 6, 16:

49 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 67, թթ. 9, 21: **Կապուտիկյան Ս.**, Ծաղկեպսակի փոխարեն. Վահան Թեքեյանի մահվան 20-ամյակը, «Գրական թերթ», Եր., 1965, 16 ապրիլի: Ա. Սեմա. մահվան 25-ամյակի առթիվ, «Գրական թերթ», Եր., 21 մայիսի:

50 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 67, թթ. 31, 50:

51 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 15, թ. 47:

52 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 18, թ. 30:

տարի կազմակերպվում էր: Սկիզբ առնելով Եղեռնի 50-ամյակի միջոցառումների շրջանակներում՝ այս ծրագրի հետագա շարունակումն անտարակույս, Հայրենիք-Սփյուռք կապերի ընդլայնմանն էր միտված:

Հայոց Եղեռնի 50-ամյակի միջոցառումների ողջ համալիրում կարևոր քարոզչական քայլ պետք է համարել ՀԿԿ կենտկոմի նախագահության 1965 թ. հունվարի 26-ի որոշումը «Հայրենիքի ձայն» թերթի հրատարակման մասին, որպես «Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի» պաշտոնաթերթ՝ 7 հազար տպաքանակով<sup>53</sup>: Ելնելով այս որոշումից՝ «Արտասահմանում ապրող հայ աշխատավորության վրա մեր ազդեցության հետագա ուժեղացման, կոմունիզմի գաղափարների, Կոմունիստական կուսակցության և Խորհրդային կառավարության ներքին և արտաքին քաղաքականության, Խորհրդային Հայաստանի տնտեսության, գիտության, մշակույթի ձեռքբերումների քարոզչության, բուրժուական գաղափարախոսությունների դեմ հակաքարոզչությունների նպատակներով»<sup>54</sup> Յա. Զարոբյանը 1965 թ. փետրվարի սկզբին ԽՄԿԿ կենտկոմին հղած նամակում հիմնավորեց նման թերթի հրատարակման անհրաժեշտությունը: Արդեն 1965 թ. մարտի 10-ին ԽՄԿԿ կենտկոմի քարտուղարությունը որոշում ընդունեց, ինչի հիման վրա ՀԿԿ կենտկոմի նախագահությունը ապրիլի 6-ին վերջնականապես որոշեց թերթի լույսընծայման հարցը: «Հայրենիքի ձայն» թերթի խմբագրական կոլեգիան, ի տարբերություն հանրապետական մյուս պաշտոնաթերթերի, հաստատվեց առանց կուսակցական-պետական գործիչների, հետևյալ կազմով. 1. Ալթունյան Թաթուլ, 2. Դավթյան Վահագն (խմբագիր), 3. Թոփչյան Էդուարդ, 4. Խաչատրյան Հայկ (պատասխանատու քարտուղար), 5. Համազասայան Վարդգես, 6. Հասրաթյան Միրուս, 7. Սարյան Մարտիրոս, 8. Սևակ Պարույր, 9. Քեշիշյան Գրիգոր: Փաստորեն, սկիզբ առնելով Եղեռնի 50-ամյակի շրջանում՝ համազգային զարթոնքի շնորհիվ, հետագայում «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթն անուրանալի դերակատարություն ունեցավ Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման գործում:

ՀԿԿ կենտկոմի քարտուղարությունը 1965 թ. փետրվարի 8-ին «Հայրենիք վերադարձած հայերի ներկայացուցիչների ժողովի անցկացման մասին» որոշում ընդունեց: Նախատեսվեց 1965 թ. մարտի 12-ին Երևանում «Խորհրդային Հայաստանը բոլոր աշխատավոր հայերի հայրենիքն է» օրակարգով ժողովում զեկուցող նշանակել Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Նազուշ Հարությունյանին, իսկ Նախարարների խորհրդին հանձնարարվեց հատկացնել անհրաժեշտ միջոցներ: Հաստատված միջոցառումների ծրագրով ՀԿԿ կենտկոմի գաղափարախոսական բաժինը պետք է հայրենադարձների անունից պատրաստեր ԽՍՀՄ և ՀԽՍՀ կուսակցական, օրենսդիր, գործադիր վերադաս մարմիններին հասցեագրված ողջույնի նամակ, 50 հայրենադարձի ցուցակ՝ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով պարգևատրելու համար, ապահովեր զանգվածային լրատվության միջոցներով իրականացվող միջոցառումների լայն լուսաբանումը, իսկ մշակույթի և գիտության բաժինը պետք

53 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 15, թ. 51-52:  
54 ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 41, թթ. 34-35:

է պատրաստեր մշակույթի, գիտության, կրթության բնագավառներում վաստակավոր կոչումներ շնորհելու համար հայրենադարձների ցուցակներ: Անցկացվող ժողովին պետք է մասնակցեին 1230 հոգի:

Ծրագիրը նախատեսում էր ուշադրության կիզակետում պահել գերազանցապես հայրենադարձներին, նույնիսկ համերգային մասում պետք է ելույթ ունենային Գոհար Գասպարյանը, Օհան Դուրյանը, Միհրան Երկաթը, Հովհաննես Չեքիջյանը<sup>55</sup>: 1965 թ. մարտի 12-ի ժողովում ընդունվեց «Խորհրդային Հայաստանի նոր քաղաքացիների» (սկստի ունեին հայրենադարձներին) «սրտալից» ողջույնի նամակը՝ ուղղված ԽՄԿԿ կենտկոմին և ԽՍՀՄ Նախարարների խորհրդին: Կոմունիստական նշանաբաններով լեցուն (ինչը հասկանալի է՝ Մոսկվա էր ուղարկվում) այս նամակում միանշանակ շեշտվում էր. «ՀԽՍՀ-ն օտարության մեջ ապրող աշխատավոր հայերի միակ հայրենիքն է: Մենք մեր սրբազան պարտականությունն ենք համարում ինքնամոռաց աշխատանքով արժանի լինել խորհրդային քաղաքացու մեծ կոչմանը»<sup>56</sup>:

Հիշատակենք, որ ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը իր 1961 թ. օգոստոսի 12-ի թիվ 731-307 որոշմամբ ՀԽՍՀ Նախարարների խորհրդին թույլատրել էր 1961-1965 թթ. արտասահմանյան երկրներից կազմակերպել հայերի վերադարձ հայրենիք ընդհանուր քանակով մինչև 40 հազար հոգի: Արտասահմանից հայերի զանգվածային ներգաղթը սկսվեց 1962 թ.: Երեք տարվա ընթացքում հանրապետություն հայրենադարձվեց և աշխատանքով ապահովվեց 4200 մարդ: ՀԿԿ կենտկոմի և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի 1961 թ. սեպտեմբերի 29-ի որոշմամբ 1965 թ. համար հայտարարվել էր 15 հազար հայրենադարձի ընդունման ծրագիր, սակայն մի շարք պետությունների կառավարություններ չհամաձայնեցին զանգվածային հայրենադարձությանը, այդ իսկ պատճառով ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը 1965 թ. հունվարի 9-ին ՀԿԿ կենտկոմին առաջարկեց թվաքանակը հաստատել 6000<sup>57</sup>:

ՀԿԿ կենտկոմի նախագահությունը 1965 թ. հունվարի 26-ին որոշում ընդունեց 1965 թ. հայրենադարձների ընդունման մասին՝ 6000 մարդ թվաքանակով: Կուսակցական և գործադիր իշխանություններին պարտավորեցրին լուծել հայրենադարձների ընդունման և տեղավորման հետ կապված բոլոր հարցերը: Հաստատվեց հայրենադարձների ընդունման և տեղավորման կառավարական հանձնաժողով՝ Նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Սուրեն Մովսիսյանի գլխավորությամբ<sup>58</sup>:

1965 թ. հոկտեմբերի 19-ին Յա. Զարոբյանը և Ա. Քոչինյանը դիմեցին ԽՄԿԿ կենտկոմին և ԽՍՀՄ Նախարարների խորհրդին հայրենադարձությունը շարունակելու խնդրանքով՝ հաշվի առնելով դրա «քաղաքական

55 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 31, թթ. 39-42: Ժողովի մասին տե՛ս «Մովետական Հայաստան», Եր., 1965, 13 մարտի: Ժողովն անցկացվեց ՀԽՍՀ բյուջեի հաշվին:

56 ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 41, թթ. 43-45:

57 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 15, թ. 49: Ի դեպ, դեռևս 1964 թ. մարտի 6-ին ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը որոշում էր ընդունել հայրենադարձների ընդունման միջոցառումների մասին: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 94, գ. 70, թթ. 2-6:

58 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 15, թ. 48:

մեծ օգուտը»<sup>59</sup>: ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը 1966 թ. օգոստոսի 9-ի «Արտասահմանյան երկրներից ԽՍՀՄ հայերի հայրենադարձության մասին» որոշմամբ ՀԽՍՀ Նախարարների խորհրդին թույլատրեց 1966-1970 թթ. իրականացնել հայերի հայրենադարձություն՝ յուրաքանչյուր տարի 1000 մարդ թվաքանակով, նրանց համար նախօրոք աշխատանքի տեղավորման և բնակարանով ապահովման համապատասխան պայմանների առկայության հիման վրա: Հատուկ շեշտադրմամբ, որպես կանոն, արգելվեց անաշխատունակ տարրերի, ինչպես նաև արտասահմանում ծնողներին և երեխաներին թողնող անձանց մուտքը: Հայրենադարձության կազմակերպման նպատակով ՀԽՍՀ Նախարարների խորհրդին թույլատրվեց ԽՍՀՄ ԱԳՆ-ի հետ համաձայնությամբ իր ներկայացուցիչներին ուղարկել արտասահման: Ի դեպ, ուշագրավ է այն հանգամանքը, որ 1966 թ. հայրենադարձության համար ծախսերը պետք է հաշվարկվեին ՀԽՍՀ բյուջեի միջոցների հաշվին<sup>60</sup>: Արդեն 1966 թ. սեպտեմբերի 8-ին ՀԿԿ կենտկոմի բյուրոն և ՀԽՍՀ Նախարարների խորհուրդը հաստատեցին 1966-1970 թթ. հայերի հայրենադարձության համակարգված ծրագիր՝ ամբողջությամբ հենված հանրապետական բյուջեի միջոցների վրա: Հիշատակելի է նաև այն կարևոր փաստը, որ այդ ամենի կատարման իրականացումը և համակարգումը հանձնարարվեց պետական լիազորմարմնի՝ ՀԽՍՀ Նախարարների խորհրդին կից «Արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեին»<sup>61</sup>:

Եղեռնի 50-ամյակի համազգային զարթոնքով էր պայմանավորված նաև **Արցախի հարցի** բարձրացումը: ԽՍԿԿ և ՀԿԿ կենտկոմներին այդ հարցի լուծման նպատակով բազմաթիվ դիմում-նամակներով դիմել էին հասարակայնության տարբեր խավերի ներկայացուցիչները: Նման պահանջով 1966 թ. ԽՍԿԿ 23-րդ համագումարին, ԽՍԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Բրեժնևին, Ադրբեյջանի և Հայաստանի կոմկուսների կենտկոմների առաջին քարտուղարներ Վ. Ախունդովին ու Ա. Քոչինյանին էին դիմել Հայաստանի գիտական և ստեղծագործական շրջանակների ներկայացուցիչները. «Լեռնային Ղարաբաղի ազգակիցներին Հայկական ԽՍՀ կազմում մեզ հետ ուս-ուսի մեր միալեզու ազգային մշակույթը, գիտությունն ու տնտեսական կյանքը զարգացնելով տեսնելու հայ ժողովրդի նվիրական, խոր ու անկեղծ երազանքը՝ լիովին համընկնում է լենինյան մեծ սկզբունքների հետ: Ղարաբաղը Հայաստան է տարածքով և ազգային կազմով, Հայաստան է՝ կենսաձևով, հոգևոր կերտվածքով ու կենցաղով: Ղարաբաղի պատմությունը Հայաստանի պատմությունն է՝ հայկական է Ղարաբաղի լեզուն, արվեստը և գրականությունը: Եւ քանի որ գոյություն ունի Հայկական ԽՍՀ, նպատակահարմար չէ նրա անբաժանելի մասը արհեստականորեն կտրել Խորհրդային Հայաստանից: Հավատում ենք, որ դուք կդառնաք այս հարցի լուծման նախաձեռնողները»<sup>62</sup>: Այս հավաքական նամակը 106 էջ կազմող ծավալով ստորագրել էին ԳԱ, ԵՊՀ, Հայկական և

59 ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 42, թ. 79:

60 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 46, գ. 65, թթ. 40-41:

61 ՀԱԱ, ֆ. 1, ց. 46, գ. 48, թթ. 4-5:

62 ՀԱԱ, ֆ. 1, ց. 46, գ. 65բ, թթ. 1-51:

Ռուսական մանկավարժական, Պոլիտեխնիկական, Անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտների, Ոսուցիչների կատարելագործման ինստիտուտի, Գրողների և Նկարիչների միությունների, «Հայաստան» և «Լույս» հրատարակչությունների, Ռադիոյի, Պոլիմերների գիտահետազոտական ինստիտուտի կոլեկտիվների անդամները՝ 1906 հոգի, Մարտիրոս Մարյանի, Երվանդ Քոչարի, Համո Սահյանի, Պարույր Սևակի գլխավորությամբ:

ԽՄԿԿ կենտկոմի քարտուղարության հանձնարարությամբ քննարկելով այս նամակը և նկատի ունենալով, որ Ղարաբաղի և Նախիջևանի հիմնահարցերի առաջ քաշումը լայն արձագանք և հավանություն է ստացել հանրապետության հասարակայնության շրջանում, ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Ա. Քոչինյանը և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Բ. Միրադյանը 1966 թ. սեպտեմբերի 30-ին ԽՄԿԿ կենտկոմին ուղղված նամակով հանգամանալից պատմական հիմնավորումով առաջ քաշեցին ՀԽՍՀ-ին Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը միացնելու հարցը: Նախ և առաջ՝ աշխարհաքաղաքական կոնյուկտուրայից ելնելով՝ նշվում էր, որ «եթե Թուրքիայի կողմից խլված տարածքների մասին ներկայումս հարցադրման աննպատակահարմարության մասին փաստարկները ժողովրդի կողմից ընկալվում են ըմբռնմամբ, ապա Հայկական ԽՍՀ-ին Ղարաբաղի և Նախիջևանի վերադարձման հետ կապված հարցերի առումով մենք լուրջ դժվարություններ ենք զգում»<sup>63</sup>: Միանշանակ կերպով փաստվում էր. «Բանը նրանում է, որ իրականում Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի պատկանելիությունը անցյալում ոչ ոքի կողմից կասկածի տակ չի դրվել: Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղի քառասունամյա մնալը իրավունք է տալիս խոսել այն մասին, որ այդ չի ապահովել այդ երկրամասի անհրաժեշտ տնտեսական և մշակութային զարգացումը: Տարածքով մարզը կից է Հայաստանին՝ հանդիսանալով նրա օգնական շարունակությունը: Այսպիսով, ցանկացած տարածքային հարցի լուծման դեպքում հիմնական փաստարկները խոսում են Հայկական ԽՍՀ-ին Լեռնային Ղարաբաղի միավորման մասին հարցադրման օրինաչափության վերաբերյալ: Այդ հարցի դրական լուծումը կունենա բացառիկ կարևոր քաղաքական նշանակություն ու կհանդիսանա մեր կուսակցության, Լենինյան Կենտրոնական Կոմիտեի և ԽՄԿԿ Կենտկոմի Քաղբյուրոյի իմաստուն ազգային քաղաքականության հաղթահանող նոր վկայություն»<sup>64</sup>:

1967 թ. մայիսի 12-ին Ա. Քոչինյանը, նկատի ունենալով Սփյուռքի հետ տարվող աշխատանքների ծավալի աննախադեպ աճը, դիմեց ԽՄԿԿ կենտկոմ՝ ՀԿԿ կենտկոմում «Տեղեկատվության և արտասահմանյան կապերի» բաժնի ստեղծման թույլտվության խնդրով<sup>65</sup>:

1967 թ. նոյեմբերի 29-ին, տասնյակ հազարավոր քաղաքացիների ներկայությամբ, հանդիսավոր պայմաններում Ծիծեռնակաբերդում վերջապես բացվեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հու-

63 ՀԱԱ, ֆ. 1, ց. 46, գ. 65ա, թթ. 1-9:

64 Նույն տեղում:

65 Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 47, գ. 57, թթ. 112-114:

շահամալիրը: ՀԿԿ կենտկոմի նորընտիր առաջին քարտուղար Ա. Քոչինյանի գլխավորությամբ ներկա էր ՀԽՍՀ կուսակցական-պետական ողջ ղեկավարությունը, մտավորականության սերուցքը: Միջոցառումը հեռուստատեսությամբ և ռադիոյով հեռարձակվեց ողջ հանրապետությամբ: Ընդունված խորհրդային արարողակարգի համաձայն՝ Երևանի Կիրովի անվան քիմիական կոմբինատի ապարատավար, սոցիալիստական աշխատանքի հերոս Ս. Պետրոսյանը, Շահումյանի շրջանի 22-րդ կուսհամագումարի անվան կոլտնտեսության կթվորուհի, սոցիալիստական աշխատանքի հերոս Աշխեն Ավետիսյանը, գրող Պարույր Սևակը, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Զավեն Դոլաբջյանը, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Թաթուլ Ալթունյանը, ՀԼԿԵՄ Երքաղկոմի քարտուղար Բ. Վարդանյանը Երևանի Կիրովի անվան քիմիական կոմբինատի քուրայից վառված և զրահամեքենայով ծիծեռնակաբերդ բերված ջահը հանձնեցին Ա. Քոչինյանին, ով էլ վառեց հավերժական կրակը: Հանդիսավոր միտինգն ավարտվեց Ա. Քոչինյանի և Վ. Համբարձումյանի ելույթներով<sup>66</sup>:

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

## 6. Մեծ Եղեռնի ոգեկոչումը Խորհրդային Հայաստանում 1970-1980-ական թվականներին

1970 թ. հունիսի 10-ին ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Ա. Քոչինյանը և Նախարարների խորհրդի նախագահ Բ. Մուրադյանը դիմեցին ԽՄԿԿ կենտկոմին և ԽՍՀՄ Նախարարների խորհրդին հայերի հայրենադարձությունը շարունակելու թույլտվության խնդրանքով՝ ՀԽՍՀ բյուջեի հաշվին: Նրանք փաստարկում էին, որ Մերձավոր Արևելքից հայերը գաղթում են ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա<sup>67</sup>:

1975 թ. ապրիլի 14-ին ՀԿԿ կենտկոմի բյուրոն հաստատեց «1915 թ. հայերի ցեղասպանության 60-ամյակի կապակցությամբ միջոցառումների մասին» համալիր ծրագիր<sup>68</sup>: Այս առումով հիշատակենք այն ուշագրավ փաստը, որ խորհրդահայ իրականության մեջ առաջին անգամ ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Կ. Դեմիրձյանը հանդես եկավ հեռուստատելոյթով, իսկ ՀԽՍՀ կուսակցական-պետական ղեկավարությունը ծաղկեպսակներ դրեց անմար կրակին<sup>69</sup>: 1975 թ. նոյեմբերի 12-ին Կ. Դեմիրձյանը դիմեց ԽՄԿԿ կենտկոմին հայերի հայրենադարձության շարունակման թույլտվության հարցով<sup>70</sup>:

1985 թ. ապրիլի 16-ին ՀԿԿ կենտկոմի բյուրոն հաստատեց «Հայերի ցեղասպանության 70-ամյակի կապակցությամբ միջոցառումների մասին» համալիր ծրագիր<sup>71</sup>: Մինչ այդ, 1985 թ. հունվարի 25-ին Կ. Դեմիրձյանը դիմել էր ԽՄԿԿ կենտկոմին ապրիլի 24-ը ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով «Ցեղասպանության զոհերի հիշատակի

66 Տե՛ս «Սովետական Հայաստան», 1967, Եր., 30 նոյեմբերի:

67 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 50, գ. 53, թթ. 143-145:

68 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 55, գ. 32, թթ. 2-3:

69 Տե՛ս **Դավաքյան Կարլեն**, Հուշապատում, էջ 191:

70 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 55, գ. 81, թթ. 122-123:

71 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 77, գ. 89, թթ. 70-71:

Ե (ՓԵ) քարի, թիվ 2 (42) ապրիլ-հունիս, 2013

ՎԻՄ համահայկական հանդես

օր» հռչակելու խնդրանքով<sup>72</sup>: Մակայն ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոն 1985 թ. փետրվարի 21-ի նիստում մերժեց նման օրենսդրական առաջարկությունը<sup>73</sup>: 1987 թ. մարտի 27-ին Կ. Դեմիրձյանն արդեն երկրորդ անգամ նույն հարցով դիմեց ԽՄԿԿ կենտկոմին՝ հետևյալ նկատառումներով. «Ընդառաջ գնալով հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա հաստատման մասին աշխատավորների բազմաթիվ առաջարկություններին, ինչպես նաև հակառակորդի կողմից իրենց քաղաքական նպատակներով ժողովրդի ողբերգության փաստի օգտագործման կանխման համար, ՀԿԿ կենտկոմը նպատակահարմար է գտնում ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով ապրիլի 24-ը հաստատել «Ցեղասպանության զոհերի հիշատակի օր»<sup>74</sup>: Ու թեև երկու անգամ էլ Կ. Դեմիրձյանը հարցը նախօրոք համաձայնեցրել էր ԽՍՀՄ ՊԱԿ-ի հետ, այնուհանդերձ, այս անգամ էլ այն մերժվեց:

Նույն հարցի շուրջ 1988 թ. սեպտեմբերի 12-ին Մ. Գորբաչովին դիմեց ՀԿԿ կենտկոմի նորընտիր առաջին քարտուղար Ս. Հարությունյանը<sup>75</sup>: Այս անգամ պատասխանը ճարահատյալ դրական էր, քանզի թափ էր հավաքում արցախյան ազատագրական պայքարը, իսկ մոսկովյան կենտրոնն էլ նախկին վարչահրամայական ներուժը չունեք:

Իսկ արդեն 1988 թ. նոյեմբերի 22-ին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդն ընդունեց օրենք «Օսմանյան Թուրքիայում հայերի 1915 թվականի ցեղասպանության դատապարտման մասին» և ապրիլի 24-ը հայտարարեց «Հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր»<sup>76</sup>:

Եվ ահա 1990 թ. հունվարի 8-ին՝ Հայաստանում խորհրդային իշխանության մայրամուտին, ՀԿԿ կենտկոմի բյուրոն հաստատեց Եղեռնի 75-ամյակի միջոցառումների ծրագիրը<sup>77</sup>:

---

72 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 418, թթ. 2-հալ: Փաստաթղթի առաջին էջը բացակայում է: Փաստաթղթի վրա կա Կ. Դեմիրձյանի ռուսերեն ձեռագիր մակագրությունը. «Քննարկված է Կենտկոմի քարտուղարությունում 1985 թ. փետրվարի 12-ին (սերկա էի): Քարտուղարությունը ընդունեց առաջարկությունը: Քաղբյուրոն քննարկել է 1985 թ. փետրվարի 21-ի նիստում: Կարծիքների փոխանակման ժամանակ հանձնարարեցին չընդունել նոր առաջարկություններ»:

73 Տե՛ս “Голос Армении”, 2005, 17 марта.

74 ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 418, թ. 3-հալ.:

75 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 418, թ. 3-հալ.:

76 Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1989, N 2, էջ 5: Այս օրենքը Հայաստանի Հանրապետության օրենսդիր մարմինների կողմից ընդունված առաջին և առայժմ միակ ակտն է, որ վերաբերում է Հայոց ցեղասպանությանը:

77 Սանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 84, գ. 40, թթ. 2-9:



## Եզրակացություններ

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Ե (ԺԵ) քարի, թիվ 2 (42) ապրիլ-հունիս, 2013

ՎԵՄ համահայկական հանդես

Խորհրդային Հայաստանում Եղեռնի 50-ամյակի պետական բարձր մակարդակով նշումը կարևոր բարոյահոգեբանական և քաղաքական խթան հանդիսացավ հետագա տարիներին այդ ուղղությամբ կատարված աշխատանքների համար: 1965 թ. ապրիլի 24-ին խորհրդային ամբողջատիրական իրականության պայմաններում հայ ժողովուրդն առաջին անգամ բարոյապես և հոգեպես, իսկ ՀԽՍՀ իշխանությունները՝ պետական բարձր մակարդակով ճանաչեցին ու բազմակողմանիորեն նշեցին 1915 թ. Հայոց ցեղասպանության 50-ամյակը:

Ճիշտ է, ՀԽՍՀ օրենսդիր բարձրագույն մարմինը՝ Գերագույն խորհուրդը, համապատասխան իրավական որոշում չընդունեց, սակայն Եղեռնի 50-ամյակի համատարած ձևով նշելն ինքնին ունեցավ կարևոր քաղաքական նշանակություն: Ավելին, այս պարագան անուղղակիորեն պետք է վերագրել նաև ԽՍՀՄ-ին (թեպետ Միսկվայում և մյուս հանրապետություններում կատարյալ լռություն և անուշադրություն էր տիրում), որի ղեկավար մարմինը՝ ԽՄԿԿ կենտկոմը և պաշտոնաթերթը «Պրավդա»-ն, ստիպված եղան որոշակի դժկամությամբ, բայց այնուամենայնիվ, թեկուզ հայեցողաբար՝ ճանաչել հայոց ողբերգությունը: Կոմունիստական ամենատիրության համակարգում գտնվող Խորհրդային Հայաստանի մայրաքաղաք Երևանի կենտրոնում վեր հասնեց Հայոց Եղեռնի նահատակների հուշահամալիրը: Հայաստանին և հայությանը հուզող հիմնախնդիրների հարցում ԽՍՀՄ-ի ղեկավարության վերաբերմունքը որոշ չափով փոխվեց: 1965 թ. ապրիլի 24-ի ցույցը և Եղեռնի 50-ամյակի միջոցառումների համազգային ընդգրկումները նրան հասկացնել-զգացնել տվեցին, որ հայ ժողովուրդն արդեն հասել է ինքնագիտակցության և ինքնակազմակերպման այն աստիճանին, որ այլընտրանք չկա. հարկավոր է հնարավորինս զիջման գնալ և փոփոխության ենթարկել 15 հանրապետությունների ժողովուրդներից մեկի՝ հայերի նկատմամբ վարվող քաղաքականությունը:

Փաստորեն, խորհրդային իշխանության օրոք առաջին անգամ ծովածավալ հայ ժողովուրդը կազմակերպված ձևով ոչ խորհրդային, ոչ կոմունիստական քաղաքական բնույթի ազգային-հայրենասիրական ակցիա իրականացրեց:

1965 թ. ապրիլի 24-ը հերթական և սովորական մի տարի էր մարդկության պատմության օվկիանում, մի առօրեական տարեթիվ, նման՝ նախընթաց և հաջորդ բոլոր օրերին: Այդպես էր բոլորի, բայց ոչ հայության համար: Հայերն այդ օրը Մեծ Սուգը պայքարով ոգեկոչելով, իրենց սրտում և հոգում անթաղ Նահատակների պատգամի արժևորմամբ վճռական էին աշխարհին ապացուցելու և ընդունել տալու Հայոց ցեղասպանության փաստը, որն այլևս դադարեց միմիայն հայության սեփականությունը լինելուց և դարձավ ողջ աշխարհի խղճի փորձաքարը:

Ուրեմն՝ հայ ժողովուրդի համար 1965 թ. ապրիլ 24-ը որոշակի հոգեբանական պատնեշի հաղթահարում էր՝ Հայոց ցեղասպանության ճանաչ-

ման հարցում համազգային միասնության դրսևորմամբ սեփական երկրին ու համաշխարհային հանրությանը համանման ոճիրներից ապահովագրելուն ուղղված պայքարի մեկնակետ: Այդ օրը սկիզբ դրվեց Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը:



Արդարություն պահանջող երիտասարդության ընդվզումը

1965 թ. ապրիլյան ցույցերի մասնակիցները գերազանցապես երիտասարդներ էին, որոնք ազգային ոգով իրենց հետագա դաստիարակությունը ստացան 1970–1980–ական թվականներին շարունակված Մեծ եղեռնի ոգեկոչումների, Սփյուռքում ծավալված նորօրյա Զինյալ պայքարի, և ապա՝ Ղարաբաղյան շարժման ու Հայաստանի Հանրապետության անկախության վերահաստատման ճանապարհին:

**THE 50TH ANNIVERSARY OF THE ARMENIAN GENOCIDE IN SOVIET ARMENIA**

The commemoration of the 50th anniversary of the Armenian Genocide in Soviet Armenia was closely related to the problem of overcoming administrative system's resistance. The encaenia of the Genocide at the state level in Soviet Armenia became moral, psychological and political impetus for the actions made along those lines in the following years. The demonstration on April 24, 1965 and the nationwide commemoration of the 50th anniversary of Genocide made understand the USSR government that the Armenian people has already reached the level of self-consciousness and self-organization when it's impossible to remain silent about that tragedy. In fact, for the first time under Soviet rule the Armenian people conducted a campaign of non-Soviet, non-communist and political nature, but of national patriotic character. 1965 April protesters were mostly young people who were brought up in national spirit also during the commemorations of 1970-1980ss, in timely armed combat of Diaspora and then on the path of the restoration of independence of the Republic of Armenia and Karabakh movement.